ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- օգոստոսի 2020 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ԹԻՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ 100 ՏՈԿՈՍԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով որ՝

ա) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, ցանցի լիցենզիա ստացած անձի բաժնեմասի նկատմամբ իրավունքի գրավադրում կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) համաձայնությունն ստանալուց հետո,

բ) «ԹԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 20-ի №171Ա որոշմամբ (որն ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 21-ից) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) լիցենզիա,

գ) Ընկերության 2020 թվականի օգոստոսի 3-ի գրությամբ վերջինս հայտնել է, որ 2020 թվականի հունիսի 3-ին Ընկերության, վերջինիս մասնակիցների և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքվել են երրորդ անձի արժեթղթերի գրավի №ԱԳՊ20/500-01 և №ԱԳՊ20/501-01 պայմանագրերը, ըստ որոնց՝ Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնեմասերն առանց նախապես Հանձնաժողովի համաձայնությունն ստանալու գրավադրվել են հօգուտ «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության: Այդ կապակցությամբ Ընկերությունը հայտնել է, որ բաժնեմասերի գրավադրման համար նախապատրաստական աշխատանքը մեկնարկել է 2020 թվականի մայիսի 11-ին և ավարտվել է 2020 թվականի հունիսի 3-ին համապատասխան պայմանագրերի կնքմամբ, մինչդեռ հանրային էլեկտրոնային

հաղորդակցության ցանցի լիցենզիա ստանալու համար դիմումը Հանձնաժողով է ներկայացվել 2020 թվականի մայիսի 13-ին: Ընկերությունը, զղջալով տեղի ունեցածի համար, ինչպես նաև նկատի ունենալով առկա խախտումն ինքնուրույն բացահայտելու և Հանձնաժողովին ներկայացնելու հանգամանքը, խնդրել է վարչական պատասխանատվության միջոցներ չկիրառել և, միաժամանակ, համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնեմասերը «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն (այսուհետ՝ Գործարք),

դ) Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2020 թվականի օգոստոսի 3-ից վարչական վարույթ է հարուցել Ընկերության նկատմամբ՝ առանց Հանձնաժողովի համաձայնությունն ստանալու բաժնեմասերը գրավադրելու փաստն ուսումնասիրելու նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2020 թվականի օգոստոսի 3-ի №ՍՇ/34.2-Մ2-10/3282-2020 գրությամբ,

ե) ի պատասխան Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 3-ի №ԳԲ/34.2-Մ2-10/3284-2020 գրության ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի օգոստոսի 10-ի № 04/11.1/4316-2020 գրության համաձայն, նախարարությունը չի առարկում Գործարքին,

զ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2020 թվականի օգոստոսի 20-ին Հանձնաժողով ներկայացված №13/20 գրությամբ հայտնել է դիրքորոշում այն մասին, որ գործող իրավակարգավորումների համաձայն Ընկերության վարքագծում բացակայում են վարչական իրավախախտման զանցակազմի օբյեկտիվ կողմի հատկանիշները, և, ի թիվս այլ իրավանորմերի, մատնանշելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, նշել է, որ Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթը ենթակա է դադարեցման կամ կարճման: Մասնավորապես, Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության ներկայացուցիչը Հանձնաժողովից Ընկերության լիցենզիայի բնօրինակը առձեռն եղանակով ստացել է սույն թվականի հունիսի 4-ին, որով հաստատվում է, որ վարչական ակտն ուժի մեջ է մտել ոչ շուտ, քան նշված ամսաթիվը: Ըստ Ընկերության, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 52-րդ հոդվածի համատեքստից հետևում է, որ սույն թվականի հունիսի 3-ին Ընկերության, վերջինիս մասնակիցների և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված երրորդ

անձի արժեթղթերի գրավի №ԱԳՊ20/500-01 և №ԱԳՊ20/501-01 պայմանագրերի կնքման պահին Ընկերությանը լիցենզիա տրամադրելու մասին որոշումը որպես վարչական ակտ դեռևս ուժի մեջ չէր մտել, և, ըստ այդմ՝ հիշյալ պայմանագրերի կնքումը չէր կարող որակվել որպես «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջների խախտում: Ընկերությունը նշել է նաև, որ իրեն տրամադրված լիցենզիայի պայմաններում Ընկերության համար առկա բազմաթիվ պարտականությունների սահմանման պարագայում՝ դրանց հետադարձ ուժ տալը և մինչև վարչական ակտի ուժի մեջ մտնելը Ընկերության նկատմամբ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի դրույթները կիրառելը կհակասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին,

է) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ՝

- Ընկերությունը խախտել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները: Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված հիմնավորումներին, հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին նույն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ, որի հիման վրա Հանձնաժողովն իր 2020 թվականի մայիսի 20-ի №171Ա որոշմամբ սահմանել է այն ուժի մեջ մտնելու հստակ ժամկետ՝ սույն թվականի մայիսի 21-ը, որի իրավաչափությունը Ընկերության կողմից չի վիճարկվել: №171Ա որոշումը ընդունվել է Հանձնաժողովի հրապարակային նիստում (ավելին, որոշման նախագիծը, նախքան ընդունվելը, տեղադրված է եղել Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում) և Ընկերության ներկայացուցիչները, նախքան նիստը սահմանված կարգով իրազեկվել են կայանալիք նիստի և Ընկերությանը լիցենզիա տրամադրելու հարցի քննարկման մասին, որի վերաբերյալ առարկություններ չեն ներկայացրել: Որոշումն ընդունման օրն Ընկերությանն ուղարկվել է էլեկտրոնային փոստով, որի ստացումը հավաստվել է Ընկերության պատասխան էլեկտրոնային նամակով: Նշվածի համատեքստում, Հանձնաժողովի գնահատմամբ, անհիմն են որոշման իրազեկման և վարչական ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ Ընկերության պնդումները: Միաժամանակ, հիմնազուրկ է Ընկերության կողմից Վարչական

իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ հոդվածի վկայակոչումը, քանի որ քննարկվող իրավախախտումն ամրագրված է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով ամրագրված իրավակարգավորումները Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչարարության նկատմամբ կիրառելի չեն,

- Գործարքը չի սպառնում ազգային անվտանգությանը, ու բացակայում են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածով սահմանված՝ Գործարքին համաձայնություն չտալու հիմքերը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը, 14-րդ հոդվածը, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 63-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը խախտելու համար Ընկերությանը ենթարկել տույժի՝ երկու միլիոն (2 000 000) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Համաձայնություն տալ Գործարքին:
3. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 30-օրյա ժամկետում №900005242319 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով սահմանված տույժը:
4. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու իր որոշումը.

   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս. ԱՂԻՆՅԱՆ

ք. Երևան
-- օգոստոսի 2020թ.